ՔՍԱՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 2447 — ՀԻՆԳՇԱԲԹԻ — 11 — ՀՈԿՏԵՄԲԵՐ — Ն. Տ. — 23 — ՀՈԿՏԵՄԲԵՐ — 1879

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համ. 10 Մէճ.
" " Գաւառաց " 2 Լիրա
Վեցամս. " Կ. Պոլսոյ " 3 Մէճ.
" " Գաւառաց " 1 Լիրա
Օտար երկիրներու " 50 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրուշ, երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ:
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արժէ:

ՄԱՍԻՍ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագրին —Յնորհնին պիտի ուղղուի, Ղալաթիա Սանտըքճըլար Ջատտէսի թիւ 198, Նորօ խան, Մասիսի գրասենեակը:
Ջանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր:
Զաղուած նամակ, յօդուած, եւ եա չեն դարձուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգլիոյ մէջ ատենախօսութիւնները դարձեալ կրարու կը յաջորդեն, և կուսակցութիւնք խորհրդարանին գումարումէն առաջ հասարակաց կարծիքը կը պատրաստեն: Սըր Հարքօրթ ճառ մը խօսելով՝ Լորտ Պիքընսֆիլտի աշխարհավարութիւնը խստիւ քննադատած էր. ահաւասիկ Ներքին գործոց նախարար Պ. Քրօս ալ Լէյի մէջ ուրիշ ատենախօսութեամբ մը պատասխանեց և ընդ երկար խօսեցաւ նաև Արևելեան խնդրոյն վրայ, իւր պաշտօնակիցներուն աշխարհավարութիւնը պաշտպանելով: Պ. Քրօս՝ նախ և առաջ Արևելեան խնդրոյն բացուելուն յանցանքը դարձեալ Ռուսիոյ վրայ դրաւ. Ռուսիոյ մէջ քանի մը կուսակցութիւններ նըշանակեց, որոց մին խաղաղութեան կը փափաքէր, մին ալ Թուրքիոյ վիճակին վրայ մեծ տագնապ կ'զգար: "Նոյնը կ'զգայինք մեք ալ, ըսաւ Պ. Քրօս. ոչ ոք, կառավարութեան և ո՛չ մի անդամը բառ մ'անգամ արտասանած է 'ի պաշտպանութիւն Թուրքիոյ զեղծմանց": Ռուսիոյ մէջ կրօնական մաս մը կար նաև, որոյ մեծ փառասիրութիւնն էր խաչը Ս. Սոփիայի վրայ վերահաստատել. պատերազմական մաս մ'ալ կար, որոյ կարծիքն յաղթող եղաւ: Այս թուումին մասանցին ի՞նչ հարկ կար. պատերազմ եղաւ և Ռուսիա նախայարձակ եղաւ Սլավները պաշտպանելու և իրեն դաշնակիցներ պատրաստելու համար. այս աշխարհածանօթ իրողութիւն մ'է: Բայց ի՞նչ պիտի ընէր Անգլիա. ի՞նչ միջոցներ ձեռք առաւ 1856ի դաշնադրութիւնըն, Թուրքիոյ անկախութիւնն ու ամբողջութիւնն և միանգամայն բարենորոգումը ձեռք բերելու համար: Այս ծանր խնդրոյն նկատմամբ Պ. Քրօսի տուած բացատրութիւնները գոհացուցիչ չեն, այլ ընդարձակ ճամարտակութիւններ են միայն: Սըր Հարքօրթ՝ Անգլիական նախարարութիւնը նեղը լծած էր սա երկայրաբանութիւնն առաջ բերելով, թէ պէտք էր որ կա՛մ Անգլիական կառավարութիւնն 1856ի դաշնադրութիւնը պաշտպանէր, կա՛մ այս գիրքը թողուր: Պ. Քրօս կը պատասխանէ թէ "այս երկու ընթացքն ալ պատերազմի կը յանգէր. քանզի կա՛մ Թուրքիոյ հետ դաշնակցելով Ռուսիոյ դէմ պատերազմելու էր, բայց խելքը գլուխը կառավարութիւն մը չէր կրնար պատերազմիլ վասն պաշտպանութեան Թուրքիոյ զեղծմանց, կա՛մ Ռուսիոյ հետ միանալու էր Թուրքիոյ դէմ կռուելու համար. բայց 1856ի դաշնադրութիւնը չէր ներէր զայս, ըստ որում յիշեալ դաշնագրին համեմատ՝ տէրութիւնք Թուրքիոյ ներքին գործոց չ'պիտի միջամտէին: Ասոնք փաստաբանական նրբութիւններ են. բայց ի՞նչպէս պիտի արդարանայ նաև Անգլիոյ մերթ զՌուսիա և մերթ ըզԹուրքիա քաջալերելը:

Զռուսիա քաջալերած էր՝ Թուրքիոյ ներքին վարչութեան դէմ իւր ըրած դանդատանօք, և զԹուրքիա քաջալերած էր՝ Պէրլինի յիշատակագիրը մերժելով: Պ. Քրօս կ'ըսէ որ եթէ Անգլիա զայն ընդունէր, պիտի պարտաւորէր դարձեալ Թուրքիոյ դէմ պատերազմելու՝ երբ նա չգործադրէր յիշատակագրին պարունակութիւնը: Բայց միթէ Գերմանիա և Աւստրիա, որք յիշատակագրին ընդունած էին, Թուրքիոյ դէմ պատերազմեցա՞ն:

Պ. Քրօս վերջապէս հռչակաւոր Անգլիական "շահերուն" գալով՝ զորս ամէն Բրիտանական նախարարութիւն սովոր է յեղյեղել, կ'ըսէ թէ ասոնց գլխաւորն էր Կ. Պոլսոյ պաշտպանութիւնը. բայց և այնպէս կը մոռնայ որ Ռուսական բանակ մը մինչև Այաստեֆանոս եկաւ, և հոն դաշնագիրը կնքուեցաւ Ռուսական թնդանօթներու սպառնալեաց ներքև: Նիքոլա մեծ դուքը դաշնագրին ստորագրութեան օրը մեծ զօրահանդէս մը պատրաստեց. ստորագրութիւնը կուշանար, և եթէ չգրուէր, բանակը կարելի էր Կ. Պոլիս քալէր: Բոլոր այն ժամանակ Անգլիա պատերազմի պատրաստութիւն կը տեսնէր, և իւր նաւատորմը բուն Մարմարա մտած էր: Այաստեֆանոսի դաշնագիրը կը հրատարակի, Անգլիա կը բողոքէ, մանաւանդ Պաթումի և Պեսարապիոյ թողման դէմ: Սըր Հարքօրթ իրաւամբ քննադատած էր՝ թէ այս բողոքին հակառակ՝ Լորտ Սալիսպըրի կոմս Շուվալովի հետ համաձայնութիւն մը հաստատելով զիջում ըրած էր: Պ. Քրօս այս կէտը մէկ կողմ կը թողու, և Պէրլինի դաշնագիրը միայն կը պաշտպանէ՝ յարելով թէ անոր միջոցաւ Անգլիա յաջողած էր Ռուսիոյ ձեռք բերած նիւթական յաջողութիւնները բաւական մեղմացնելու: Պէրլինի դաշնագիրն 1856ի և 1871ի դաշնագրերէն ծագում առած էր, որոց աշխատասիրութեան համեմատ տէրութիւն մը չ'պիտի կրնար ինքիրմէ դաշնագիրը փոխել:

Այս ատենախօսութիւնը Լէյ քաղաքին մէջ պահպանողական Քլիւպին նոր շէնքին բացման առթիւ տրուած կոչունքի մը մէջ խօսուեցաւ. բացումն հանդիսաւոր եղած էր ի ներկայութեան տասն հազար անձանց. և կոչունքն հարկաւ փառաւոր: Պ. Քրօս կրնայ պարծիլ որ եթէ Թուրքիոյ բարգաւաճման համար Անգլիա մեծ բան մը չըրաւ, գոնէ ինք իւր մեծութեանն և շահուց ծառայեց:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(Թայմզի յօդուածին մնացորդը)

"Թուրքական վարչութեան վիճակին այդպիսի մէկ պայծառ նըկարագիրը՝ մասնաւոր ղայրացմամբ պիտի կարդացուի այս երկրին (Անգլիոյ) մէջ: Յարակոյս չկայ թէ մեք այնպիսի դիրք մ'ընդունեցինք, որ մեր վրայ մեծ պատասխանատուութիւն պիտի թողու եթէ այդ զեղծումները խափանուին: Մեք մեծ ծառայութիւններ մատուցինք Դրան, և փոխարէն խիստ դրական խոստումներ պահանջեցինք իրմէ թէ իւր վարչութիւնը պիտի բարւոքէ: Բնականաբար անտեղի կը լինի մինչև իսկ անուղղակի կերպիւ զմեղ ամբաստանել Թուրքիոյ մէջ այնպիսի անկարգութեանց շարունակելուն պատճառաւ, որք դարերէ 'ի վեր արմատ բռնած են: Բայց վերջին երկու երեք տարիներու մէջ ըսուած և կատարուած ամէն բաներէ ետև՝ մեծ պատասխանատուութիւն կը մնայ մեր վրայ եթէ այդպիսի չարիքներն արմատախիլ ընելու համար մեր կառավարութիւնը բոլոր ձեռքէն եկածը 'ի գործ չդնէ: Գիտնալով որ մեր թղթակցին նկարագրածին նման ոճիրներ գործուած են, և նոյն իսկ մեր պաշտօնատարաց և անկախ թղթակցաց կողմանէ այդ չարիքները մեր աչաց առջև դրուած լինելով, պատճառ ունիմք ամչնալու՝ եթէ Դրան վրայ ամենաստիպողական ճնշում 'ի գործ չդնեմք, որպէս զի անմիջապէս իրական բարենորոգումներ ներմուծէ. և եթէ մեր ջանքերն ապարդիւն լինին, դժուար պիտի լինի զմեզ արդարացընել Եւրոպիոյ առջև: Մեք բացորոշապէս ըսինք Սուլթանին թէ իւր տէրութեան օգնելու մասին մեր յանձն առած պարտականութիւնն ո՛չինչ է եթէ ինք իւր խոստումներ չկատարէ. բայց կը մնայ տակաւին զգացնել իրեն թէ այդ պայմանը մեք մեր կողմէն իբրև իրականութիւն նկատելու մտադիր եմք:

"Մեր կառավարութեան գալով, նա պէտք է ապահով լինի թէ իւր վարչական գործոց մասին Անգլիոյ ժողովրդեան իրմէ ամենէն աւելի պահանջելիք կէտն այն ջանքերն են՝ զորս ինք ըրած է՝ Բ. Դրան խոստումները գործադրել տալու և Ասիական Թուրքիոյ ժողովրդեան խոստացեալ բարեաց մի քանին ընձեռելու համար: Անկլօ-Թուրք պայմանադրութիւնն իբրև ունայն բան մ'ամբաստանելն անիրաւէ տակաւին, որովհետև անոր ազդեցութիւնն ըստ արժանւոյն զգացնել տալու չափ ժամանակ չգտնուեցաւ դեռ: Բայց այդպիսի ամբաստանութեանց մեծ պատճառ պիտի տրուի՝ եթէ չտեսնուի թէ մեր կառավարութիւնը՝ Դրան յանձն առած պարտականութեանց գործադրութիւնը պահանջելու կաշխատի փութով և թէ այս նպատակաւ ամեն առիթէ օգուտ կը քաղէ:

"Այս մասին մեր վերջին տեղեկութիւնք խիստ ցաւալի էին: Մեր Կ. Պոլսոյ թղթակիցը քանի մ'օր առաջ (Մասիսի մէջ արդէն ամբողջապէս հրատարակեալ) մէկ հեռագրաւն յայտնեց թէ Դուռը կարելի եղածին չափ քիչ գործ ընել մտադիր կը թուի, և թէ մինչև իսկ անցեալ տարի Լորտ Սալիսպըրիի եղած չափաւոր զիջումները գործնականապէս կ'ոչնչացուին: Այնպիսի ջանքերէ ետև, որք մինչև իսկ Սըր Հէնրի Լէյըրտն յուսահատութեան նման վիճակի մը մէջ թողուցին, Դուռը վերջապէս դատական և ելմտական տեսուչներ անուանելու և ազգաց ասպիկանութիւն մը կազմելու հաւանութիւն տըւաւ: Բայց այժմ քիչ շատ օրէնսդրութեան հետ տեղական լեզուաց հմտութիւն ունեցող օտարազգիներ բնաւ չեն կրնար գտնուիլ՝ դատական տեսուչ անուանելու համար: Գալով ելմտական տեսչաց, մեծ դըժուարութենէ ետև Անգլիացի մ'և Գաղղիացի մ'այդ պաշտօնին անուանեցան: Բայց հնարիւք իմն՝ անկեց յետոյ ընդհանուր տեսուչ անունով պաշտօնատարաց նոր կարգ մը սահմանուեցաւ. որք յիշեալ օտարազգեաց գլուխը դրուած են, և այսպէս այս վերջնոց անուանման բուն նըպատակն 'ի դերև հանուած է. իսկ Անգլիացի տեսուչն հրաժարական գրկիր է:

"Նոր ասպիկանութեան գալով, փոքր յառաջդիմութիւն մ'եղաւ Սուրիոյ՝ ինչպէս նաև Ադրիանուպօլսոյ նահանգին մէջ. իսկ Փոքր-Ասիոյ մէջ, որ մեր մասնաւոր հոգածութեան ներքև է, բան մը չէ եղած: Այսպիսի իրողութեանց առջև անհնար է չհարցնել թէ ի՞նչ կ'ընէ մեր կառավարութիւնը: Սըր Հէնրի Լէյըրտ Սուրիա այցելութիւն ըրաւ, և կրնայ խորհուիլ թէ իւր ազդեցութիւնը Միտհատ փաշայի բարենորոգական ջանքերուն նպաստ տուած է, և թէ՝ ի վերադարձին՝ Կ. Պոլսոյ մէջ աւելի մեծ ծանրակշռութեամբ պիտի կրնայ խօսիլ՝ երկրին վիճակին նկատմամբ անձնական քննութիւն ըրած լինելուն պատճառաւ: Այս առաւօտ Կ. Պոլսէն մեր առած տեղեկութիւնները կը ցուցնեն թէ Սըր Հէնրի Լէյըրտի պայմը քիչ մը մոռհողութիւն պատճառած է նոյն իսկ պա-

լատան մէջ, կը յուսամք թէ ինչ որ ինք լսած ու տեսած է իւր ուղեւորութեան միջոցին, պիտի ստիպէն զինք այդ մոռահոգութիւնն աւելցընել՝ ստիպողական գիտողութիւններ ու յանդիմանութիւններ ընելով ի նպաստ Քրիստոնեայ ժողովրդեան։ Այլ եւս ժամանակ է որ իւր յանդիմանութիւնքը տեսանելի արդիւնք մը յառաջ բերէն. ժամանակ է որ ո՛չ եւս ներողամտութիւն ցոյց տրուի այնպիսի խոստմանց մասին, որք դիւրաւ կը տրուին եւ աւելի դիւրաւ ի թերեւ կը հանուին։ Հոս, օրինակի աղագաւ, ծանր պարագայ մ՚ունիմք մեր առջեւ։ Այն պատմութիւնն, որոյ վրայ խօսեցանք ներկայ յօդուածիս մէջ, Թուրքիոյ խիստ աչքի զարնող մէկ կողմն ի գործ դրուած բռնութիւն մը կը նկարագրէ։ Պատմուած իրողութիւնք ձեռնհաս վկայի մը կողմանէ հաստատեալ են, որ անոնց ճշմարտութեան պատասխանատուութիւնն յանձն կառնու։ Ինչո՞ւ մեր դեսպանը չպնդէ որ այս գործը կատարելապէս քննուելով, ոճրագործներն յօրինակ այլոց պատժուին։

«Մեք Ասիական Թուրքիոյ մէջ յանկարծ չեմք կրնար բարեկարգութիւն ներմուծել, բայց յայտնի ոճիրներու պատժուելուն վրայ պնդելու կարող եմք, և եթէ այսպէս երեւան եկած ամեն ոճիր ըստ արժանւոյն պատժուի, մեծ ազդեցութիւն կը ընայ յառաջ գալ։ Մեր թղթակցին նամակը խոշոր ոճիր մ՚ի լոյս կը հանէ, և կը կարծեմք թէ մեր կառավարութեան պարտքը կը պահանջէ որ այդ ոճրին վրէժը լուծուի ըստ արժանւոյն։»

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 22 հոկտ.

Առկախ մնացած խնդրոց նկատմամբ Գաղղիա և Անգղիա վերջին օրերս քանի մը կարեւոր յայտարարութիւններ ըրին Դրան։ Այդ յայտարարութեանց խնամին վրայ որ և է լուր չելաւ։ Միայն յայտնի է որ խիստ բարեկամական հանգամանք մ՚ունեցած են։ Դուռն այնպիսի տպահովութիւններ տուեր է որք գոհացուցիչ գտնուեր են, և նախատեսել կուտան եղեր թէ երմտական ծրագրոյ՝ ինչպէս նաև Հելլենական խնդրոյն մասին աշխարհավարութեան փոփոխութիւն մը պիտի լինի։

Վիէննա 22 հոկտ.

Հունգարիոյ այլեայլ գաւառներէն կառավարութեան եկած տեղեկագրաց նայելով, հնձոց գէշութեան պատճառաւ թշուառութիւն կը տիրէ Հունգարիոյ մէջ, ուր սովի երկիւղ կայ։ Թշուառաց օգնութեան գալու համար իշխանութեանց կողմանէ փութով արտաքոյ կարգի միջոցներ ձեռք պիտի առնուին, և այս նկատմամբ մասնաւոր հանգանակութիւնք ևս պիտի բացուին։

Այս առաւօտ հոսած հեռագիրք

Լոնտրա 21 հոկտ.

Սիմլայէն եկած հեռագիր մը Քեաշիլէն առնուած վերջին լրոց համեմատ կը ծանուցանէ թէ Պալա—Հիսարի բերդը բռնկելով, 20 (Անգղիացի) զօրք մեռեր են։ Կը վախցուի թէ Քեաշիլի մէջ ուրիշ նմանօրինակ պայթումներ տեղի ունենան։

Զմեռն անցուցանելու համար Ռուսաց դէպ ի Կասպից ծով քաշուելուն լուրը կը հաստատուի։

Փարիզ 22 հոկտ.

Առկէ առաջ տրուած լրոց հակառակ՝ Պ. Պ. Պէյրինկ և Տը Պլինիէր անմիջապէս Եգիպտոս չեն երթար։ Պ. Տը Հայմէրլէի հետ խորհրդակցելու համար երկուշաբթի օրը Վիէննա գնացին, և յետոյ Փարիզ պիտի վերադառնան։ Միայն Նոյեմբերի սկիզբն Եգիպտոս պիտի երթան։

Վիէննա 22 հոկտ.

Սպանիոյ արտաքոյ կարգի դեսպան Պայլէնի դուքսն երէկ Ֆրանչիսկոս Յովսէփ կայսեր ներկայացաւ և Մարիամ—Քրիսթինա Աբրիգքսուհին ամուսնութեան խնդրեց Սպանիոյ Ալֆոնս թագաւորին համար։

Փիլիպէ 22 հոկտ.

Արևելեան Ռումելիի ընդհանուր կառավարիչ Ալէքս փաշան նահանգին մէջ ըրած քննութեան պատճառն այս առաւօտ Փիլիպէ վերադարձաւ։

Փարիզ 21 հոկտ.

(Մայրայեղ հանրապետական) Մարսէյլէզ լրագրոյ տնօրէն Պ. Իւնպէր, դատաւորաց դէմ թշնամանք ըրած և հասարակութիւնը պաշտպանած լինելուն համար բանտարկութեան և տուգանաց դատապարտեցաւ։

Լոնտրա 22 հոկտ.

Օսմ. Քոնս.	11 5/16	
Փոխ. 1865	14 1/2	
» 1869	14 1/4	
» 1871	56 1/4	
» 1872	21 1/2	
» 1873	13 5/8	
» Եգիպտ.	73 5/8	
Անգղ. Քոնս.	97 3/3	

Փարիզ 22 հոկտ.

Օսմ. Քոնս.		11,50
Դաղղ. Քոնս.	3 0/0	81,70
» »	» Նոր	83,20
» »	5 0/0	117,95

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գաշտօնատանց տեսուչ Բարձր. Սաֆվէթ փաշան երէկ Վեհ. Սուլթանին ներկայացաւ, բայց հրաժարականի խնդրոյն մասին տակաւին լուր մը չէ եղած։

——

Վադբթ կը ծանուցանէ թէ Թուրքօ-Հելլենական յանձնախմբին եօթներորդ նիստը վաղն ընելու որոշուած տրուած է։

——

Մայրաքաղաքիս Անգղիական դեսպան Սըր Հ. Լէյըրտ երէկ յատկապէս Բ. Դուռը գնաց և նորընտիր Առաջին Նախարարին և Արտաքին գործոց Նախարարին պաշտօնը շնորհաւորեց։

——

Կ՚ըսուի թէ Հռոմի Օսմանեան նախորդ դեսպան Լատա պէյ արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական (Միւսթէշար) պիտի անուանի։ Լատա պէյ այս պաշտօնն ուրիշ ժամանակ ալ վարած էր։

——

Արևելեան Ռումելիի ընդհանուր կառավարիչ Ալէքս փաշան նահանգին տեղական զինուորութեան և ոստիկանութեան նախորդ հրամանատար Վիթալիս փաշայի դէմ Բ. Դրան դանդատագիր մը ղրկած լինելով, Վիթալիս փաշան պատասխանելու համար ընդարձակ տեղեկագիր մը Բ. Դրան։

——

Հոկտ. 14 թուով Եւրոպական լրագրոց մէջ հրատարակեալ Հավասի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սաֆվէթ փաշան տերութեան զինուորական եօթն շրջանակաց կառավարիչներուն ծանուցեր է թէ Դուռն իւր Քրիստոնեայ հպատակները կայսերական բանակաց մէջ զինուորական ծառայութեան ընդունել որոշած է, և թէ իւրաքանչիւր շրջանակ տասն և ութ հազար զօրք պիտի տայ։

Մեղ այնպէս կը թուի թէ Հավասի գործակալութիւնն՝ — եթէ ոչ Օսմանեան կառավարութիւնը՝ — քիչ մ՚աճապարել կը թուի այս Քրիստոնէից զինուորագրութեան խնդրոյն մէջ։ Քրիստոնէից՝ կամ աւելի ճիշդ խօսելով՝ Հայոց զինուորագրութիւնը նախնական ինչ ինչ կարեւոր խնդրոց կարգադրութեան ստորադասեալ է։ և որովհետև Բ. Դուռը քաջ գիտէ դայս, կը կարծեմք թէ Հավասի լուրերը կանխահաս են, մանաւանդ թէ պաշտօնապէս կամ անպաշտօն կերպիւ տակաւին որ և է լուր չէ հրատարակուած մայրաքաղաքիս մէջ և թէ Վադբթ լրագիրն անդամ իւր այս առաւօտեան թուոյն մէջ հաւատք չընծայեր այդ լրոյ։

——

Երկուշաբթի օրը 115 տարեկան Հրեայ մը մեռաւ Դալաթիա։

——

Կ. Պոլսէն հոկտ. 13 թուականաւ հեռաւորեալ հեռագիրը քաշուած է Եւրոպական լրագրաց։

Մուսուլէն եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ Քիւրդերուն նոր ապստամբութեան դէմ Ապիտուլլահ Շէյխի հետ սկսուած բանակցութիւնք մինչև յարդ ապարդիւն են մնացած են։ Ապստամբութիւնը նոյն սաստկութեամբ կը շարունակէ։ Պաղատատի կուսակալին հրաման տրուեցաւ որ տասն և հինգ վաշտ ևս զրկէ ի Մուսուլ։ Քիւրդք մինչև իսկ այս քաղաքին (Մուսուլի) պատերուն ներքև կուգան, ուր ամեն տեսակ գողութիւններ ու սպանութիւններ կը գործեն։ Շրջակայ բոլոր գիւղերք ամայի են։

——

Սթամպուլ լրագիրը կը ծանուցանէ թէ կառավարութիւնն որոշեր է կենդանի լեղուաց ուսուցման համար մեծ դպրոց մը հաստատել, ուր Թուրքերէն և Դաղղիերէն պարտաւորական, իսկ Անգղիերէն, Գերմաներէն, Ռուսերէն և ուրիշ լեզուներ կամաւոր պիտի լինին։

——

Նախորդ Մեծ-Եպարդոս Մէհմէտ Բիւշրի փաշան, որ վերջերս Զմիւռնիոյ Պուրուն-Ապատ գիւղը կը բնակէր, ձմեռը Մանիսա անցուցանել որոշեր է։

——

Ծովային նախարարութեան մէկ պաշտօնական ազդը կը ծանուցանէ թէ Մահսուսէի տնօրէնութեան Հայտար-փաշա, Գատըքէօյ, Կզզիներն, Այսթէֆանօս, Նիկոմիդիա, Մուտանեա, Կէմլէյիք և Ռօտոսթօ շոգենաւ բանեցնելու արտօնութիւնն, ինչպէս նաև այս ուղեւորութիւնները կատարող տասն երկու շոգենաւք աճուրդի հանուած են։

——

Արևելեան Ռումելիի Յոյն ընակիչք Բ. Դրան բողոքագիր մը ղրկեցին մեծերս կատարուած ընտրութեանց ժամանակ Պուլղարաց ի գործ դրած մեքենայութեանց համար, որոց շնորհիւ նահանգին երեսփոխանական ժողովին մէջ գրեթէ միայն Պուլղար տարրը ներկայացեալ պիտի լինի։ Յիշեալ բողոքագրին մէկ պատճէնը մեծ տերութեանց Փիլիպէ նստող հիւպատոսաց ալ հաղորդուած է։

——

Զորս տարուան աշխատութենէ և վեց միլիոն Ռուպլի ծախք ընելէ ետև, Բեդրսպուրգի մէջ Նեվա գետին վրայ Աղեքսանդր Բ. անուամբ նոր և շքեղ կամուրջ մը շինուեցաւ, և մեծ հանդիսիւ բացուեցաւ։

Անգղիոյ մէջ Կրնիչ և Միլուօլ քաղաքաց միջև թամիզ գետին տակէն նոր թունել մը պիտի շինուի ի մօտոյ։

——

Անգղիոյ երկրագործական տագնապն վրայ, որ վերջերս Իրլանդիոյ յուզմանց աւելնալուն պատճառ եղած էր, բազմաթիւ Անգղիացի երկրագործք իրենց ընտանեաց հետ օտար երկիրներ գաղթել սկսած են։

Մինչդեռ այս խեղճերն ազատ և ուժան հող չեն կրնար գտնել մշակելու և արդիւնաւորելու համար, ասդին փոքր-Ասիոյ մէջ մարդ կրնայ երկու չաբաթ շարունակ ճանապարհել՝ առանց դիւղ մը գտնելու, որոյ բնակիչք իրենց հողերը քիչ շատ լաւ մշակած լինին, և արդաւանդ հողերու ընդարձակ տարածութիւններ տեսնել, որոց բրիչ չէ դպած տակաւին։ Զարմանալի՛ հակադրութիւն։ և անկէ ետքը կըսեմք թէ առանց միջոցաւորութեան դործ չը լինիր . . . . . ։

——

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՒ

Երէկ իրիկուն գոցուեցաւ		12,13
Այս առաւօտ բացուեցաւ		12,12
Կէս օրին		12,13
Բանկի երկաթուղի	Ֆր.	42 25
Թղթադրամ	Լիր.	745

ԸՆԹԱՑԵՔ ԴՐԱՄՈՑ

10 Հոկտեմբեր

Անգղ. լիրա	դրչ.	109 22
Նարօլէան ոսկի	»	87 8
Խիւնքիար Ալաս	»	89 38
Գերմանիոյ	»	51 10
Մէճիտիէի տարբերութիւն	»	6 18
Հինգնոց »	»	17 10
Մէթալիք		17 10
Պղինձ	»	400

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արարատեան ընկերութեան կողմէ այս օրերս հրատարակեալ երրորդ Տեղեկագրոյն մէջ Կրօնական ժողովը մեկնութեան կարօտ ինչ ինչ կէտեր դտնելով, այս մասին հարկ դատեց բացատրութիւն պահանջել ընկերութեան Գործադիր ժողովէն, որ փութայ իւր պատասխանագրով լուսաբանել քննադատութեան նիւթ եղած կէտերը։

Այս լուսաբանութեամբ՝ Կրօնական ժողովը լուծուած համարելով խնդիրն, արժան կը համարի՝ ի պաշտօնէ հրատարակել Գործադիր ժողովոյ բացատրութեանց դիրն՝ որ ահաւասիկ։ (Կնիք.)

10 հոկտ. 1879 (Պատր. քրնի Հայոց)

Կէօչէ օղլու խան Գալաթիա

Կ. Պոլիս 8/20 հոկտ. 79

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայոց նախագահ Կրօնական ժողովոյ Ազգային Վարչութեան։

Պատկառելի ժողովդ բացատրութիւն խնդրած լինելով Արարատեան ընկերութեան վերջին տեղեկագրին 10դրդ երեսի տողերուն նկատմամբ թէ «երրորդ տարին աշակերտը կըսկսի ճանաչել զԲրիստոս իբր բարոյական մարդ» կը փութամք դրաւոր հաղորդել այն բացատրութիւնը զոր ներկայացուցի արդէն Պատկառելի ժողովոյդ։

Այդ հատուածին մէջ գտնուած «իբր բարոյական» տարցուածը, Հայերէնի յատուկ յեղաշրջման օրինօք կը վերաբերի ոչ թէ Քրիստոսի՝ այլ աշակերտին, զոր նոյն տեղեկագրի 8դրդ էջն ալ կը նկատէ «իբր Հայ» իբր Քրիստոնեայ և բարոյական մարդ «հետևաբար քննադատելի հատուածը պէտք է իմանալ «երրորդ տարին աշակերտը՝ իբր բարոյական մարդ՝ կ՚սկսի ճանաչել զԲրիստոս»։

Մատուցանելով Ձեր բարձր Սրբազնութեան մեր խորին յարգանքն

Մնամք

Ի դիմաց Արարատեան Գործադիր Ժողովոյ Ատենադպիր

(Կնիք Ընկ.) *Աբէլեար Աբէլեան*

Յ. Դ. կը փութամք նաև յաւելու՝ պատասխանի ինչ ինչ դիտողութեանց թէ 9որդ երեսի մէջ յիշատակուած «աւանդական դրութիւնը» իմանալու է, ուսուցանելու աւանդական դրութիւն, և թէ 10դ երեսի «չորութեամբ» բառը՝ խրթնութեամբի իմաստով գործածուած է։

Ատենադպիր Գործ. Ժողովոյ
Աբէլեար Աբէլեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Դավրէժ 8 Սեպտ. 1879

. . . Խմբագիր Տէր։

Քաղաքիս երիտասարդներէն վեց բանիբուն ուսումնասէր անձինք յղացան իրենց մէջ մի բարի խորհուրդ, հաստատել Դավրիժի մէջ մի օրիորդական վարժարան։ ուստի 17 Յունիսի կազմեցին մի տան մէջ ընդհանուր ժողով, անդ հիմնեցին «Ասարայրեան» անուն մի ընկերութիւն, և դրուեցան ըստ բաւականին բաժանորդագրութիւն և ընտրեցին 7 անդամէ բաղկացեալ մի Գործադիր ժողով, որոնք յօժարեցան անձնուիրաբար ընդունիլ այսպիսի մի փափուկ պաշտօն յօգուտ Դավրիժարնակ իգական սեռին։ Ուստի անմիջապէս մի քանի օրվան մէջ վարձեցին մի տուն, զիլոզական պայմանաւ ընդունեցին Առաւելեանց Տ. Աշխէնին ուսուցչուհի նոյն վարժարանին և զիս իրրև տեսուչ և դասատու։

Իսկ 12 Օգոստ. կատարուեցաւ Ասարայրեան ընկերութեան Օրիորդական վարժարանի բացման հանդէսը, շատ փառաւոր չքեղութեամբ նոյն վարձուած տան բակի մէջ, ուր հրաւիրուած էին քաղաքիս երևելի անձինք։

Կէս օրէն չորս ժամ անցած սկսեց հանդէսը։ նախ եկեղեցականք զգեստաւորուած շարական ասելով մնան նորաբաց վարժարան, ուր հաւաքուած էին բաւականաչափ աշակերտուհիք իրենց միաձև հագուստներ հագած, վարժուհու հետ։ Եկեղեցականք իրանց հոգևոր հանդէսը վերջացնելէց յետոյ, սկսեցաւ ազգային հանդէսը։ Նախ՝ խօսեցաւ Նաղար էֆ. Դորեանց մի խորհրդաւոր ատենաբանութիւն, յետոյ ազգային երգ, և հետզհետէ կարդացին Դ. Աւագ Աֆթանուլեանց, Աշխէն տիկին Առաւելեանց, Յուսիկ Փափազեանց, և յետ այնորիկ խօսեցայ և ես մի խրախուսական ատենաբանութիւն։ և ամէն ճառէ աւարտումից յետոյ, կ'լսէին ծափահարութիւններ, և կ'երգուէին ազգային քաղցրանուագ երգեր։ Ամենից յետոյ բաժնուեցան բոլոր հանդիսականաց թէյ, մրգեղէններ, որոնք զետեղելու ածէին մի մեծ և փառաւոր սեղանի վերայ բակի կեդրոնում։ Ամեն մարդ ուրախութեամբ իրանց գոհունակութիւնը յայտնելով Ասարայրեան ընկերութեան Գործադիր ժողովոյն, մեկնեցան գնալ իրենց տները։ Երկու օրէն յետոյ սկսեցին յաճախել վարժարան աշակերտուհիք և սովորել կարևոր ուսմունքներ և ասեղնագործութիւն։ մինչև յարդ 36 աշակերտուհի հաւաքուած են։

Եւ ահա նոյն խօսուած ճառերի պատճէնները յղեցի սոյն նամակիս հետ, որն որ՝ եթէ արժան համարէք, խնդրեմ Արգոյ Խմբագիր, զետեղել Մասիս պատուական լրագրիդ մի անկիւնը սոյն նամակիս հետ՝ 'ի խրախուսութիւն Դավրիժարնակ Ազգայնոցը։

Մ. Գ. Փափազեան

Վան 15 սեպտ. 1879

. . . Խմբագիր Մասիս ազգօգուտ լրագրոյ։

Շատ բաներ կան որոց վրայ որչափ խորհրդածութիւններ ընէ մէկ մը, պէտք է որ նոյնչափ հառաչէ։ այսպէս ալ, երբ մէկ մ'իր ներսիդին կղզայ մի թշուառի աղէտները, կաղկիզուի, և այդ ներքին յուզման արտաքին արտայայտութիւնն արցունք կը լինի։ արցունքը որ կը թափուի հեղեղի պէս։ դի անկարելի կը լինի չարգահատիլ այդ աղէտներուն վրայ։

Այժմ, Վանը աղէտներու ծովին մէջ կը ծփայ, և թշուառութեանց ալիքներ չեն դադրիր զայն վտանգաւոր ընդհարումներով բաղխելէ։ Արկած, թշուառութիւն, հարստահարութիւնք, կողոպտմունք և հացի սղութիւն սովորական եղած են Վանայ համար, և այս առթիւ մահատիպ հառաչանքներն և արտասուքը Վանեցիքը կենսակոն այժէ սպառած են արդէն։ Իրողութիւնք աներկրայելի են. բայց քանի որ անկարելի է Վանցի Հայ ընտանեաց թշուառութիւնը իրականապէս գրել առանց տակնուվրայ լինելու, քանի որ անհնար է այս «անօթի և հարստահարեալ» ընտանիքներու ներկայ կեանքը նկարագրել առանց արտասուելու (արտասուքը թերևս այս կէտին իրաւացի լինի), կը յայտնեմք թէ, Վան եթէ քանի մ'ամիս այս վիճակին մէջ մնայ, սովը, սրածութիւնն և տարաժամ մահեր անխուսափելի են Վանեցիներու համար։

Երևակայեցէք դուք Վան իբր եղեռնական «քաոս» մը, յորում Հայ ընտանիքները Քրիստոսի չարչարանքէն աւելի կը կրեն, դժնդակ խաչակրութիւն մը, որոյ ներքև բարբարոս Քիւրտերէն կեղեքուելէն, սպաննուելէն, ողջ ողջ քերթուելէն, այրուելէն, գետամոյն լինելէն, առևանգուելէն, տան, կալուածոց, ըստացուածոց, տուարներու կողոպտու�՝ տալէն հաքը՝ հացի սատիկ սղութեան դառնութիւններ ալ կը կրեն։

Երևակայեցէք «որբ և այրի» կիները (որոց չատեր 5–7 աղջիկներ ունին և մանչ բնաւ), որք արշալոյսէն մինչև դիշերի առաջին պահուն «ճախրակ» ներու առջև ծունկ չոգելով, կը տքնին և կը գօսանան։ Ասոնք այս չարքաշ կեանքին մէջ օրը 1 դրուշ չկրնալով վաստկիլ, իսկ օրը 5–8 դրուշի սակ հաց գնելու պարտաւորուած լինելով, ոմանք տունը, ըստացուածքը ծախելու կը խորհին, ոմանք ամենածանր պարտքերու ներքև կը մնան, իսկ ոմանք մինչև իսկ որդիները ծախելու կը խորհին։ Ծախուած հացեր կառավարութեան փտատած ցորենը և քարէն կարծր պաքսամաններն են, եթէ մէկ մը կրնայ քարը ուտել։ ամեն օրը փուռերուն առջև այնչափ բազմութիւնն կը լեցուի որ գիրար ծեծելու կ'ըստիպուին։ Որբ և այրի կիները այս պատերազմի պահուն լալու դիրքէն ի զատ ուրիշ դիրք մը չունին։ Հացին օխան 4–5 դրուշի կը ծախուի, մինչդեռ 2 տարի առաջ 10–20 փարայ էր։ Հացը առատ է հոս, բայց երկու աղգի (Հայ Թուրք) իշխան կոչուածները դիտմամբ սղցնելու կ'աշխատին, և կառավարութիւնն ալ թոյլտուութիւն կընէ։

Ասպատակութիւններն օր օրուան վրայ կը շատնան։ Ասպատակ Քիւրտերու հրոսակներ ամեն դիւղերուն մէջ տարածուած են։ Վանէն քանի մ'օր հեռու գտնուող «Առճաւազ և Արճէշ» քաղաքներուն «Կաղուս» կոչուած դիւղին վրայ Քիւրտերու խուժան մը կը յարձակի անցեալ օրը՝ և 40էն աւելի եղներ կը տանին։ դիւղացիք իրենց հաւատարմութեան արատ չբերելու համար պատերազմի ծագման պատճառ չեն լինիր։ թէ և երկար ատեն կը դիմադրեն։ ասկէ վերջ երբ դիւղացիք պղերսելով կը պատանջեն իրենց եղները։ «մինչև որ մէկ մէկ քիլէ ցորեն չտաք, չենք տար» կըսեն։

Ասոր քովերը, Վիճնացուակ (Մէջնայուակ) կոչուած դիւղին մէջ կը մտնեն, նոյնպէս խումբ մը Քիւրտեր, և դիւղը ամբողջապէս կողոպտելէն ետքը, Քիւրտերէն տնասնամէրն եղող մէկը տունէ տուն կը պտըտի, և 40էն աւելի կիներէն միայն մէկ հարս մը կ'ընտրէ, որոյ կը հաւնի, և զայն հրապարակաւ կը պղծէ։ Մօտ օրերս «Տարման, Ոսկի բակ, Սըխկեայ» և ուրիշ դիւղերէն 4—500 ական ոչխար ներ տարած են նոյնպէս։ Այս նամակ գրելէն 2 օր առաջ ալ Ապաղի կոչուած տեղւոյն Պալասոր անունով դիւղին մէջ 50էն աւելի ասեղնաւոր (ինէլի) հրացաններ Քիւրտեր կը յարձակին Վանայ Ռուսական դեսպանի սուրհանդակին՝ Մարխաս անուն անձ մ'և 10ի չափ դիւղացիներուն վրայ, որք Երևանէն կուգային, և ամեն բան կողոպտելէն ետքը՝ Մարխաս անուն երիտասարդն ալ 3 անգամ մորթելու կը տանին, և յետոյ կ'արձակեն. այս կորուստ (ինչպէս Մարխասն կը հաշուէր) 300 ոսկիէն աւելի էր։

Նոյնպէս «Հատի–Եաման» կոչուած դիւղի մը մէջ Արտամետցի Հայ մը կ'ըսպաննէ քաղաքիս մէջ բարբարոսութեան կողմանէ համբաւաւոր եղող Թուրք մը։

Հայ տարրը միթէ յաւիտեան պիտի ճնչուի՞ այս կեղեքումներու և ազատներու «երկանաքարին» ներքև։ Տէրութեանց «դաշնագրին» 61որդ յօդուածն միթէ իբր խաղալի՞կ կամ Հայերն առաջինէն աւելի հարստահարելո՞ւ համար գծուեցաւ. մինչև ցե՞րբ պիտի երկայնամտին Հայեր, մինչև ցե՞րբ պիտի համբերեն։ Թիղմ ունենալ՝ արդահատելըսել է, և միթէ Եւրոպիոյ դիւանագիտութիւնն պիտի չ'խղճահարի՞ Հայերու «թշուառութեան» վրայ։ Վա՜յ Հայուն, որուն ոչ ոք չ'կայ պաշտպան։ Վա՜յ Հայ տարրին որ իր ոտքը քայլ մը հեռու չը կրնար նետել յառաջդիմելու համար։ Թէև Պօլսեցիք յուզուած նկատեն այս նամակ, բայց դիտեան անոնք որ իրաւունք ունին ցնցուիլ դաւառացի Հայերու Պօլսեցի փափկասուններ ի՞նչ դիտեն թէ Վան կամ միւսներ ի՞նչ վիճակի մէջ են։

3. — Աղէտներ՝ աղէտներու վրայ։ Մեր վիշտեր բաւական չէին, ուրիշներ ալ կը յաւելանան անոնց վրայ։ «Վարժապետանոցը՝» որոյ դրութենէն ամեն ոք մեծամեծ յոյսեր կ'տածէր, անդարմանելի վիճակի մը մէջ է այժմ. ամեն օր դրեթէ (այս չաբաթ) Նաթանեանի և միւս պաշտօնէից մէջ բանակռիւ չարաշար պատերազմներ կ'լինին։ Պ. Մ. Նաթանեան՝ «Մէթոտ» անուն դիրքով աշակերտներուն անհաւատութիւն դաս տալու փորձեր կ'ընէ, և Վանայ ողջամիտ մասն և ամբողջ ժողովուրդ ասոր դէմ վերջին ատեանն յուզուած, կա՛մ զայն և կա՛մ վարժապետանոցը կործանելու կ'աշխատին։ Միթէ Ասարատեան ընկերութիւնն անձեռնհա՞ս էր յատուկ ուսուցիչներ բերել տալու հոս, փոխանակ անդիտորէն Մ. Նաթանեանը վարժապետանոցին «Հայերէնի և Պատմութեան» դասախօս ընտրելու և վարժարանին տեսչութիւնն ալ անոր յանձնելու, որուն իսպառ անյարմար է, ինչպէս իր աշակերտներն իսկ կ'վկայեն. փոքրիկ տղայ մը կրնայ իմաստասիրել այս բան, ո՞ւր կը մնայ «Ասարատեան» հաշակաւոր ընկերութիւնն։

Նամակս կնքած ատեն խումբ մը «թշուառներ» տեսայ, որք մեր հրապարակէն կ'անցնէին։ Այս «թշուառներու» տխուր տեսարանին վրայ արդարութիւնս ա՛յն ատեանն յուզուեցաւ որ հաղիւ կրցայ առանց արտասուելու հարցնելու միայն թէ, ո՞ւր տեղէն կուգային, որք պատասխանեցին անմիջապէս թէ, «Խիծել» (մեծ հրոսակ) Քիւրտեր տուին «խօլապայ» վերէն, ինչ որ կէր՝ թալանեցին տարան, մենք մինակ ճորով կարցանք մեր «օլուխ չօճուխ» առնել փախել, մեղմէ մէկը սպաննեցին, և մէկ երկուսն էլ «Պրինտար» արեցին, դեղ մարդ չմնայ՝ հըմէն էլ կ'փախին կուգան»։

Երկաթ անդամ կ'հալէր, եթէ տեսնար մերկ և բոպիկ այրեր՝ կիներ՝ աղջիկներ՝ մանչեր՝ և փոքրիկ տղաներ՝ որք կծկուած էին իրենց մօր գիրկերուն վրայ։

* Ս *

Կ. Պոլիս 9 Հոկտ. 1879

. . . Խմբագիր։

Կիլիկեան ընկերութեան գործադիր ժողովն խնդութեամբ կը ծանուցանէ թէ Մարաշու մէջ Հայրենասիրաց ընկերութեան խնամատարութեան ներքև գտնուած վարժարանը աւելի զարգացուն վիճակի մը բարձրացնել ուզելով՝ Շահնազարեան վարժարանի նախկին յաւաջադէմ աշակերտներէն Պ. Միսաք Էլմասեան Մարաշ ղրկած է տեսչութեան և դասատուութեան պաշտօնով։ Պ. Միսաք Էլմասեան որ հմուտ և ազգասէր երիտասարդ մ'է, իւր սոյն պաշտօնի մասին մեծ փորձառութիւն ստացած է արդէն իւր թէ Մայրաքաղաքիս և թէ գաւառաց ազգային վարժարաններուն մէջ վարած դասատուութեան բազմամեայ պաշտօնավարութեամբը։

Գործադիր ժողովս սոյն բերկրաբերթ լուրը Ձեզ հաղորդելով՝ կը խնդրէ, . . . խմբագրատեան, որ բարեհաճիք զայն հրատարակել Ձեր պատուական թերթին միջոցաւ ի դիտութիւն այն ամեն բարեսէր ազգայնոց, որք իրենց հզօր աջակցութեամբ քաջալերը կանգնած են միշտ ընկերութեանս։

Մնամք մեծաւ յարգանօք

Ատենադպիր Դեր. Ատենապետ
Տ. Ա—ոէեան Ա. Հէ–ոէեարպեկեանեան

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԷՐԲ ՏԱՐՕՆՈՑ

Պատմութիւն Ալէքսանդրի և Սարգսի քաջացն Աշխարհաստայ։

Գրեաց Կարապետ Վ. Եսայեան Դոքտոր ուսիցն Տարօնոյ։

Ամեն Հայ գրասիրաց քով կը գտնուի։ Գին 5 ՂՐՇ։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգային վարժարանաց մէջ ուսում առած և Մէղպուբեան վարժարանին մէջ ալարդէն պաշտօն վարած Բարեկիրթ Հայ օրիորդ մը կը փափաքի ազգային վարժարանի մը կամ պատուաւոր տան մը մէջ դասուցիչի պաշտօն վարել։ Պէտք ունեցողներն՝ Օրթագիւղ Տէրէ Իչի Սոպաճի Գաբրիէլ աղային պիտք է դիմեն։

ԳԸՉ ԳՈՒՎԷՍԻ

ԳՈՐԾԱՐԱՆ

Նէնէֆէ Ժիսիոոդ

Զիչէք Պաղար Սուլթան Համամ փողոց թիւ 2

և մեծ մթերանոց 'ի նոյն փողոց թիւ 45

Սոյն գործարանին անօրէնութիւնն, որ երկար ատենէ 'ի վեր ծխախոտի առևտրով կ'զբաղի, մեծ քանակութեամբ Եէնիճէի, Տրամայի և Պաֆրայի ծխախոտ պատրաստած է։ Մեր մթերանոցը պատուել ուզող անձինք, ինչպէս նաև ծխախոտաճառք կրնան ապահով ըլլալ որ Ա. յատուկ ուղղակի բերուած մեր ծխախոտներուն թէ՛ որակութենէն և թէ՛ գիներէն շատ գոհ պիտի ըլլան։

Մեր գործարանէն եկած ծխախոտները մայրաքաղաքիս ամեն վաճառատուները կը գտնուին։ Մեր մթերանոցը մասնաւոր յանձնարարութիւններ ալ կ'ընդունուի, ինչպէս նաև թղթակցութիւն Եւրոպայի և օտար պիւռօներու հետ՝ խիստ չափաւոր գիներով։

Մ–Վէ Աբէլ– Ա ԸՆ

ԱՐԳԵՐԿԱՅԻՆ ՄԵՂԱՍԱՆ

Վ. Պօլիս Պալատի Մրճաւորան և Բրիկլայեր Ամերիկայի Մարզպետի կը ծախուի, ոչ թէ ճերմակ կաւներ, ու սերտերի ծածկոց և այլն, սերտերի պրտաւաքար, Դ-Գ-ալ և այլն. կարգ Լայնքներ, սերտերի ճերմակ յախճապակի սալաք ինչպէս սանիներ, քարերօճներ, ինչպէս ծաղկոց, քիմնէ սալան և այլն, բոլոր հանրայի միջոցներու համար գործածելու համար ամենէն ցածագոյն գնով։ Ամերիկայ ամենէն մեծագոյն գործարանի մը գործակալ մը։ Ամենայն տեսակ նմոյշներ, և ուրիշ անթիւ պիտանի պատրաստութիւններ։ Խնդրեցէք գրասենեակս։

ՏՕԿՏՕՐ Մ. ՄԱՐՏԻՆ

Վիեննայի Սէրբերկաստ Տէրօսա ամբէն մէջ պուանցան սիեկիեսանցն պէտու կիսէրէ Բէլօրա մի կիէրէ Ամերիկան ամ քանէրէ չէօնէրէ կիթէր Ամերիկայ օրան Տ.Թ.Ամերիկայ ամ գ.սատ կարգ դ.սատ կարգ դ.սատ կարգ դ